

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 6/7

16 փետրվարի 2016 թ.

Քննարկվեց քաղաքացի Մելանյա Մանուկյանի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 17.11.2015 թ-ի թիվ 405/04 որոշման դեմ:

Քաղաքացի Մելանյա Մանուկյանի գանգատում բերված փաստարկները.

Մելանյա Մանուկյանը հայտնում է, որ 20.11.2015թ-ին ստացել է ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից ուղարկված թիվ 405/04 որոշումը, ըստ որի հանդիսանում է Ա/Ձ և 16.11.2015թ-ի դրությամբ չկատարված հարկային պարտավորությունը կազմում է 371.390 դրամ, որը ենթակա է գանձման: Նա հայտնում է նաև, որ երբևէ չի հանդիսացել և չի հանդիսանում Ա/Ձ և իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում որպես անհատ ձեռնարկատեր գրանցված չէ, ինչի մասին ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը տվել է համապատասխան տեղեկանք:

Վերոնշյալը հիմք ընդունելով, Մելանյա Մանուկյանը խնդրում է չեղարկել 17.11.2015թ. թիվ 405/04 որոշումը:

ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով Ա/Ձ Մելանյա Մանուկյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 16.11.2015 թ-ի դրությամբ նրա չկատարված պարտավորությունը կազմում է 371.390 դրամ: Նշված պարտավորությունն առաջացել է 2009-2012 թ.թ. ընթացքում «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված նվազագույն սոցիալական վճարի գումարները սահմանված ժամկետներում չվճարելու հետևանքով:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 17.11.2015 թ-ին ընդունվել է թիվ 405/04 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Մելանյա Մանուկյանից 371.390 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Քննարկման ընթացքում նշվեց, որ 01.05.2006 թ-ի դրությամբ Ա/Ձ Մելանյա Մանուկյանը պարտավորություններ է ունեցել միայն նվազագույն սոցիալական վճարի գծով, հետևապես նրա գործունեությունը պետք է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դադարեցված (լուծարված) լիներ, հետևյալ պատճառաբանությամբ.

11.11.2005 թ-ին ընդունված «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր, սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն. «Սույն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներում չնշված անհատ ձեռնարկատերերն ազատվում են 2003-2005

թվականների համար հաշվարկված և չվճարված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների, ինչպես նաև դրանց նկատմամբ հաշվարկված և չվճարված տույժերի վճարումից (բացառությամբ սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված դեպքի):

Սույն հոդվածում նշված անհատ ձեռնարկատերերի կողմից 2006 թվականի հունվարի 1-ից հետո մինչև պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառման պահը պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարներ չեն հաշվարկվում (չեն վճարվում):

Սույն հոդվածում նշված անհատ ձեռնարկատերերի ցանկերը (2003-2005 թվականների համար հաշվարկված և չվճարված պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների պարտադիր նշումով) հարկային տեսչությունները մինչև 2006 թվականի սեպտեմբերի 1-ը ներկայացնում են պետական ռեգիստրի գործակալության համապատասխան տարածքային ստորաբաժանումներ՝ մինչև 2006 թվականի նոյեմբերի 1-ը պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառում կատարելու, նրանց վկայականները անվավեր ճանաչելու և պարտավորությունները հրապարակելու համար»:

Տվյալ դեպքում Ա/Ձ Մելանյա Մանուկյանը բավարարել է վերոգրյալ իրավանորմով նախատեսված դրույթների պահանջներին, հետևապես նրա վերաբերյալ տվյալները պետք է ընդգրկվեն հարկային տեսչության կողմից մինչև 2006 թվականի սեպտեմբերի 1-ը պետական ռեգիստրի գործակալության համապատասխան տարածքային ստորաբաժանումներ ներկայացվող ցանկերում՝ մինչև 2006 թվականի նոյեմբերի 1-ը պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառում կատարելու, ինչպես նաև վկայականը անվավեր ճանաչելու և պարտավորությունները հրապարակելու համար: Սակայն, տվյալ դեպքում հարկային տեսչության կողմից «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր, սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված պահանջները չեն կատարվել, ինչի հետևանքով Ա/Ձ Մելանյա Մանուկյանի նկատմամբ 2009-2012թ.թ. համար պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների գծով, ըստ էության, հաշվարկվել են ոչ իրավաչափ պարտավորություններ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ռ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ հրավերային վարչության պետի 17.11.2015 թ-ի թիվ 405/04 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ